

ՓՈՒԽՀԱՄԱՉԱՅՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ք. Երևան

“15” օգոստոս 2019թ.

“ՄՏՍ Հայաստան” փակ բաժնետիրական ընկերությունը (ստորև “Ընկերություն”) հանձինս Գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանի**, որը գործում է համաձայն Ընկերության կանոնադրության, մի կողմից և Երևան քաղաքում Մ.Վ.Լուսինոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի մասնաճյուղը (ստորև “ԲՈւՀ”) հանձինս գործադիր տնօրեն **Պավել Մաֆարյանը** մյուս կողմից (միասին “Կողմեր”) կազմեցին սույն հուշագիրը նպատակ ունենալով հետևյալը.

- ա) համատեղ ուժերով նպաստել Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի զարգացման գործընթացին,
- բ) ուսանողների համար ստեղծել նորագույն տեխնոլոգիաների միջոցով տեսական և գործնական գիտելիքների զարգացման հնարավորություններ,
- գ) հաստատել փոխշահավետ, բազմաբնույթ համագործակցային հարաբերություններ:

Հուշագրի շրջանակներում իրականացվելու է հետևյալ գործունեությունը՝

1. “ԲՈւՀ”-ի ուսանողների արտադրական և նախադիպլոմային (ուսումնական) պրակտիկայի անցկացում “Ընկերությունում”:
2. Մասնագիտական առարկաների համատեղ դասավանդման կազմակերպում “Ընկերության” համապատասխան աշխատողների ներգրավմամբ:
3. Համատեղ գիտահետազոտական աշխատանքների և աշխատանքային նախագծերի իրականացում:
4. Ուսանողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարման հարցում “Ընկերության” համապատասխան աշխատողների ներգրավում:
5. Գիտամանկավարժական գործունեության արդյունքների համատեղ քննարկում և գնահատում:

1. “ԲՈւՀ”-ի պարտավորությունները

1.1 Տրամադրել ուսանողական պրակտիկայի տարեկան պլանը և համաձայնեցնել ժամանակացույցը “Ընկերության” հետ:

- 1.2 Համաձայն “Ընկերության” կողմից ներկայացված պահանջների ընտրել “ԲՈւՀ”-ի լավագույն ուսանողներին պրակտիկայի անցկացման համար:
- 1.3 Ուսանողների պրակտիկայի սկսվելուց առնվազն 1(մեկ) շաբաթ առաջ Ընկերությանը տրամադրել “ԲՈւՀ”-ի կողմից հաստատված Ընկերություն պրակտիկայի գործուղված ուսանողների ցանկ:
- 1.4 Ապահովել ուսանողների պարտաճանաչ հաճախելիությունը ըստ նախապես համաձայնեցված ժամանակացույցի:
- 1.5 Ընդգրկել “Ընկերության” կողմից առաջադրված թեմաները ուսանողների կողմից իրականացվող գիտահետազոտական աշխատանքներում:
- 1.6 “Ընկերության” պահանջով ներկայացնել ուսանողների առաջադիմությանը վերաբերող տեղեկատվություն:
- 1.7 “Ընկերության” կողմից առաջադրվող դասավանդման թեմաները քննարկել և ընդգրկել ուսումնական գործընթացի մեջ:
- 1.8 Առաջադրված դասախոսությունների ժամանակացույցը համաձայնեցնել “Ընկերության” հետ:
- 1.9 Ապահովել “Գործատու”-ի կողմից առաջադրված դասախոսական կազմի համար դասախոսությունների իրականացման համար անհրաժեշտ պայմանները:
- 1.10 Համատեղ աշխատանքային նախագծերի և գիտահետազոտական աշխատանքների իրականացման ընթացքում ապահովել “ԲՈւՀ”-ի կողմից ղեկավարի ներգրավվածությունը:
- 1.11 Ուսանողների և համապատասխան դասախոսական կազմի համար ստեղծել անհրաժեշտ պայմաններ “Գործատու”-ի առաջարկով կատարվող նախագծերի արդյունավետ իրականացման համար:
- 1.12 Կազմակերպել գիտական և աշխատանքային հանդիպումներ/նիստեր համատեղ քննարկումների իրականացման նպատակով:

2. Ընկերության պարտավորությունները

- 2.1 Տրամադրել պրակտիկայի առկա տեղերի և ժամանակացույցի պլանը կիսամյակային կտրվածքով:
- 2.2 Ներկայացնել “Ընկերության” կողմից սահմանված պրակտիկանտներին ներկայացվող որակավորման պահանջները:
- 2.3 Նշանակել պրակտիկայի ղեկավար յուրաքանչյուր պրակտիկանտի համար:
- 2.4 Սահմանել առաջադրանքներ պրակտիկանտների համար և հետևել դրանց իրականացմանը:
- 2.5 Տրամադրել պրակտիկայի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ պայմաններ:
- 2.6 Ուսանողներին տրամադրել կոմերցիոն գաղտնիք չհանդիսացող տեղեկատվություն, որը անհրաժեշտ է ուսումնական գործընթացի արդյունավետ ընթացքի համար:
- 2.7 Ապահովել պրակտիկանտների զբաղվածությունը պրակտիկայի ընթացքում:

- 2.8 Ուսումնա-պրակտիկական գործընթացի կազմակերպման համար ներգրավել բարձր որակավորմամբ կադրեր:
- 2.9 Մշակել ուսումնական նյութեր և մատուցել դասընթացներ համաձայն համատեղ մշակված պլանի:
- 2.10 Ապահովել “Ընկերության” աշխատակիցների կողմից մատուցվող դասընթացների բարձր որակը:
- 2.11 Գնահատել դասընթացների ընթացքը:
- 2.12 Առաջարկել “Ընկերությանը” հետաքրքրող թեմաներ համատեղ աշխատանքային նախագծերի և գիտահետազոտական աշխատանքների համար:
- 2.13 Մասնակցել ուսանողների դիպլոմային աշխատանքների ղեկավարմանը:
- 2.14 Ղեկավարել համատեղ նախագծերի պլանավորման և իրականացման գործընթացը:
- 2.15 Մասնակցել գիտական և աշխատանքային հանդիպումներին/նիստերին համատեղ քննարկումների իրականացման նպատակով:

3. Այլ պայմաններ

Հուշագիրը ուժի մեջ է մտնում “Կողմերի” ստորագրման պահից և գործում մինչ փոխադարձ համաձայնությամբ կամ կողմերից որևիցե մեկի նախաձեռնությամբ դադարեցումը:
 Հուշագրի փոփոխությունները կամ դադարեցումը կատարվում է փոխադարձ համաձայնությամբ:
 Սույն Հուշագրին ցանկացած հավելված, փոփոխություն կամ լրացում կատարվում է գրավոր երկու Կողմերի ստորագրությամբ և հանդիսանում է սույն Հուշագրի անբաժանելի մաս:

“ՄՏՍ Հայաստան” ՓԲԸ
 ՀՀ, ք.Երևան, Արգիշտի 4/1
 Հեռ. (374-60) 771 111
 ֆաքս.(374-93) 298021

Երևան քաղաքում Մ.Վ.Լուսինոսովի անվան
 Մոսկվայի պետական համալսարանի
 մասնճյուղը ՀՀ, Երևան, Այգեստան փ., 8տ
 Հեռ. (374-11) 900 110

Գլխավոր տնօրեն՝
 Ռալֆ Յիրիկյան

Գործադիր տնօրեն՝
 Պավել Սաֆարյան



 ստորագրություն
 “15” օգոստոս 2019թ.




 ստորագրություն
 “15” օգոստոս 2019թ.
